

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈͰԿՅԱՆ ԵՐՈͰՍԱՂԵՄԻ ጓԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Երուսադեմ, Իսրայել

Սիրելի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք

Ամենայն Յայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կենսախինդ ավետիսով, Յայրապետական օրինությամբ և սիրով ողջունում ենք Ձեզ, Երուսաղեմի Յայոց Պատրիարքության զինվորյալ հոգևոր դասին ու Իսրայելի Մեր սիրեցյալ և հավատավոր զավակաց։

Անցան Մեծի Պահոց օրերը աղոթաբույր։ Աստվածորդու թափուր գերեզմանի առջև, ականջալուր ավետավոր հրեշտակին, ի ձայն ցնծության երգում և փառաբանում ենք Յրաշազարդ Յարությունը Յիսուս Քրիստոսի, որ աշխարհ եկավ լուսավորելու կյանքը Իրեն հուսացյալ ժողովուրդների, որոնք ճանաչեցին «զնա և զզօրութիւն յարութեան նորա»։

Յույսի ու հաղթության այս շնորհազարդ օրերին համայն մեր ժողովրդի հետ վերստին խանդավառվել ենք լուսառատ մեր գալիքի կենդանի տեսիլքով, վերստին լցվել հավատով, որ Տիրոջ օրհնությամբ և մեր բոլորի բարի կամքով ու գործերով օրավուր պիտի ծաղկեն և պտղաբերեն սերն ու

համագործակցությունը ազգային մեր կյանքում, արդյունավորվեն ի շինություն և ի պայծառություն Յայրենի մեր ազատ ու անկախ Երկիրի ու Մայր Եկեղեցու։

Սիրելի Սրբազան Պատրիարք, մեր Տիրոջ՝ Յրաշափառ Յարությամբ հուսանորոգ, ի խորոց սրտի աղոթում ենք առ Բարեխնամն Աստված՝ հայցելով, որ Իր Աջի հովանու ներքո անսասան պահի Յայրենիքն ու Եկեղեցին Յայոց, նվիրապետության Սուրբ Աթոռները մեր Եկեղեցու և մնայուն ձեռքբերումներով քաջառողջ երկար գահակալություն պարգևի Ձեզ ու Ձեր առաջնորդությամբ՝ արգասաբեր ծառայություն Երուսաղեմի Յայոց Պատրիարքության ոոգևոր ուխտապահ դասին։

Թող Յարուցյալ Փրկիչն Իր առատ ողորմությամբ օգնական ու աջակից լինի հավատավոր Իր Յայոց հոտին ամենուր և համենայնի։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց

Եղբայրական սիրով աղոթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ A.R.A.R.@

digitised by



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵՇԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

UUMPLPUU - LPPUUUU

(Phi 78/00

Wertham . It sumply 2000

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան Պատրիարք Հայոց Երուսաղեմի Երուսաղեմ

Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս

Տծառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Ցարութեան աշնին առթիւ, քրիստոնեական ջերմ սիրով կ'ողջունենք Ձերդ եղբայրութիւնը։ Հոգեկան ցնծութեամը գեղուն այս օրերուն, կը հայցենք Ամենաբարին Աստուծմե, որ մբ օրձնուբեան ճերքեւ պահէ Ձեզ, Սրբոց Յակործանց Միաթանութիւնը եւ Ձեր հոգեւոր իշխանութեան ենթակայ հաւատացեալ ժողովուրդը։

Երկու հազար տարիներէ ի վեր քրիստոնեայ աշխարհը ամենտարի է։ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի Յարութեան տօնը, որուն ջնորհիւ մեր հաւատքի լոյսը կը մնայ անմար, յոյսը՝ անստուեր եւ մահը՝ անզօր նուանելու մեզ։

2000 թուականը հայ ժողովուրդին համար սովորականէն տարբեր տարի մըն է։ Ազգովին կը գտնուինք քրիստոնեական հաւատքի պետականացման 1700ամեակի սեմին, եւ միւս կողմէ՝ պիտի նշենք 85-ամեակը քսաներորդ գարու այն ահուոր դէպքին, Հայկական Յեղասպանութեան, որ կը միտէը բնաջնջել մեր ժողովուրդը։ Այս երկու դէպքերը կու գան վկայելու, թէ հայութիւնը միջտ կենդանի պահեց իր մէջ քրիստոնէական հաւատքն ու Քրիստոսի Յարութեան մարդկութեան բերած յոյսը։

Մեր մաղթանքն է, որ մեր ազգի բոլոր զաւակները՝ ի Հայաստան, յԱրցախ ի սփիւռս աշխարհի առաւել եւս ամրապնդեն իրենց քրիստոնէական հաւատքը, եւ Յարութեան յոյսով ապրին իրենց կեանքը։ Թող Աստուած Ձերդ Սիրելութեան շընորեէ քաջառողջութիւն ու բեղմնաւոր ծառայութեամբ հարուստ երկար գահակալութիւն՝ ի ծառայութիւն Հայց. Առաքելական Ս. եկեղեցւոյ եւ Ձեր հոգեւոր իչխանութեամ ենթակայ հաւատացեալներուն։

Եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

ቢቦቢሆ ሺ. ካቢውበቢኮካበ። ሆስጥኮ ያቢኒኒ ካኮኒኮካኮበያ

digitised by

A.R.A.R.@

### ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԹՈՐԳՈՄ Բ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ամենապատի՜ւ Հայը,

Երկհազարամեայ Յոբելենական Սուրբ Տարուան Սբ. Զատկի տօնին ո՜րքան կը յարմարի մեր եռամեծ հօր Սուրբ Գրիգոր Տալժեւացիի խորհրդածուլժիւնն ի մասին Տիրոջ կուսական ծնունդին եւ ի լոյս գերեզմանէն յարուլժեան. «Ան որ կուսական կնքուած արգանգէ ծնաւ իբր անդրանկածին, նոյնպէս ի կոյս եւ ի լքեալ գերեզմանէ յարուլժիւն առաւ անապական մարմնով..»։

Արդարեւ Բելծդեհէմի խանձարուրէն մինչեւ դատարկ գերեզմանի ծալլուած վարշամակը փրկադործուլծեան մի՜ եւ նո՜յն խորհուրդն է, որ կը բացայայտուի միայն խաչելուլծեան, երեջօրեայ լծաղման եւ յատկապէս հրաշափառ Սուրբ Յարուլծեան լոյսին ներջեւ։

Նո՛յն հաւատքով եւ զատկական ուրախունեամբ, այսու մեր շնորհաւորու-Թիւնները կը յղենք Ձեզի, Սրբոց Յակովբեանց Ուիստի բոլոր միաբան հայրերուն եւ Իսրայէլի, Պաղեստինի եւ Յորդանանու մեր ժողովուրդին, մաղնելով բոլորին տօնական ուրախունիւն, երջանկունիւն, խաղաղունիւն, արեւշատունիւն եւ եկեդեցանուէր եւ Աստուածահանոյ բոլոր գործերուն մէջ լիակատար յաջողունիւն:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ։


Եղբայրական սիրոյ ողջունիւ եւ խոնարհ աղօթակցութեամբ,

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ

Up Զատիկ ՌՆԽԹ/ 2000

digitised by

A.R.A.R.@



نيافة البطريرك توركوم مانوكيان بطريرك الأرمن في الديار المقدسة والاردن – القدس بواسطة السفارة الاردنية – تل ابيب فاكس رقم : ١٧٧١< ٥ ٧٣٢<٠٠ .

السلام عليكم ورحمة الله وبركانه وبعد ، فقد تلقينا ببالغ الشكر والتقدير تهانيكم الرقيقة الطيبة التي بعثتم بـــها إلينسا بمناسبة حلول عيد الاضحى المبارك ، وإننا إذ نبادلكم التـــهاني بسهذه المناممــبة العطرة لنسال المولى عز وجل أن يعيدها عليكم بدوام الصحة والسعادة والتوفيــق وعلى الامتين العربية والاسلامية بالخير واليمن والبركات . وكل عام وأنتم بخير ،،

عبد الله الثاني إبن الحسين ملك المملكة الاردنية الهاشمية - عمان

# FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Serviço das Comunidades Arménias

His Eminence Torkom II Archbishop Manoogian Armenian Patriarch of Jerusalem Jerusalem

Your Beatitude,

At this time of Easter festivities please accept all good wishes from the Department of Armenian Communities for the best of health and strength in your holy mission.

With kindest regards,

Dr. Mikhael Essayan Trustee 00 351 21 782 3114

Lisbon, 14<sup>th</sup> April 2000

digitised by

### ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԹՈՐԳՈՄ Բ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ամենապատի՜ւ Հայը,

Երկհազարամեայ Յոբելենական Սուրբ Տարուան Սբ. Զատկի տօնին ո՜րքան կը յարմարի մեր եռամեծ հօր Սուրբ Գրիգոր Տալժեւացիի խորհրդածուլժիւնն ի մասին Տիրոջ կուսական ծնունդին եւ ի լոյս գերեզմանէն յարուլժեան. «Ան որ կուսական կնքուած արգանգէ ծնաւ իբր անդրանկածին, նոյնպէս ի կոյս եւ ի լքեալ գերեզմանէ յարուլժիւն առաւ անապական մարմնով..»։

Արդարեւ Բելծդեհէմի խանձարուրէն մինչեւ դատարկ գերեզմանի ծալլուած վարշամակը փրկադործուլծեան մի՜ եւ նո՜յն խորհուրդն է, որ կը բացայայտուի միայն խաչելուլծեան, երեջօրեայ լծաղման եւ յատկապէս հրաշափառ Սուրբ Յարուլծեան լոյսին ներջեւ։

Նո՛յն հաւատքով եւ զատկական ուրախունեամբ, այսու մեր շնորհաւորու-Թիւնները կը յղենք Ձեզի, Սրբոց Յակովբեանց Ուիստի բոլոր միաբան հայրերուն եւ Իսրայէլի, Պաղեստինի եւ Յորդանանու մեր ժողովուրդին, մաղնելով բոլորին տօնական ուրախունիւն, երջանկունիւն, խաղաղունիւն, արեւշատունիւն եւ եկեդեցանուէր եւ Աստուածահանոյ բոլոր գործերուն մէջ լիակատար յաջողունիւն:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ։


Եղբայրական սիրոյ ողջունիւ եւ խոնարհ աղօթակցութեամբ,

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ

Up Զատիկ ՌՆԽԹ/ 2000

digitised by

A.R.A.R.@



نيافة البطريرك توركوم مانوكيان بطريرك الأرمن في الديار المقدسة والاردن – القدس بواسطة السفارة الاردنية – تل ابيب فاكس رقم : ١٧٧١< ٥ ٧٣٢<٠٠ .

السلام عليكم ورحمة الله وبركانه وبعد ، فقد تلقينا ببالغ الشكر والتقدير تهانيكم الرقيقة الطيبة التي بعثتم بـــها إلينسا بمناسبة حلول عيد الاضحى المبارك ، وإننا إذ نبادلكم التـــهاني بسهذه المناممــبة العطرة لنسال المولى عز وجل أن يعيدها عليكم بدوام الصحة والسعادة والتوفيــق وعلى الامتين العربية والاسلامية بالخير واليمن والبركات . وكل عام وأنتم بخير ،،

عبد الله الثاني إبن الحسين ملك المملكة الاردنية الهاشمية - عمان

# FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Serviço das Comunidades Arménias

His Eminence Torkom II Archbishop Manoogian Armenian Patriarch of Jerusalem Jerusalem

Your Beatitude,

At this time of Easter festivities please accept all good wishes from the Department of Armenian Communities for the best of health and strength in your holy mission.

With kindest regards,

Dr. Mikhael Essayan Trustee 00 351 21 782 3114

Lisbon, 14<sup>th</sup> April 2000

digitised by